



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 299

16 օգոստոսի 2023 թվականի N - Ա

**«ԱԳԱՐԱԿԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴ ԱՆԺԵԼԱ ԱՂԱՅԱՆԻ
ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ԵՎ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ՕԳՈՍՏՈՍԻ 17-ԻՆ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ, 34-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ձևավորված մասնագիտական հանձնաժողովի դրական եզրակացությունը, Անժելա Աղայանի ներկայացրած փաստաթղթերը և 2023 թվականի հունիսի 26-ի N 1 արձանագրությունը՝

ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

2023 թվականի օգոստոսի 17-ից «Ագարակի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի հավակնորդ Անժելա Աղայանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով՝ լուծելով նրա հետ 2018 թվականի օգոստոսի 17-ին կնքված N 20 աշխատանքային պայմանագիրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ**

Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2023թ. օգոստոսի 16
ք. Կապան

